

նոյն անկեալ քաղցր 'ի քուն: Արեւելեալ եկաց անճառ հիացմամբ, և նշանացի ցուցանէր զայն Սիրինճերի. և երկաքանչիւր նովին զգացմամբ 'ի ծունր անկան առ զուգահրեշտակ օրիորդան, որ Բարձրելոյն հովանաւորութեամբն ջէր անդանօր: Հայր նորա 'ի դէմս դստերն յառեալ և զմայլեալ, իսկ պատանին պատկառանօք զաչս 'ի վայր արկեալ՝ չիչխէր իմն հայել յայնքան անմեղութիւն: Զարթեալ օրիորդն, ծանեալ զհայր իւր, և զիմեալ 'ի զիրկս նորա, ասէ. Ո՛հ, զիտէի զի հոգայիր վասն իմ: Իսկ հայրն փարեալ զնովաւ, ասէ. Է՛հ, դուստր, յորպիսի հոգս արկեր զմեզ, զմայր քո տառապեալ և զիս: Դուստրն ասէ. Ներեա ինձ հայր, զի եղէ նմա առիթ արտասուաց. երթիցուք սրբել զարտասուս նորա: Եւ 'ի յառնելն տեսեալ զպատանին, բերկրալից զարմացմամբ ասէ. Երանի է ինձ, զի պաշտպանք իմ հսկեն զինե, Աստուած իմ յերկնից, հայր իմ և դու յերկրի: Խանդաղատեցաւ պատանին ընդ բանս նորա մինչև յարտասուս. իսկ հայրն ասէ. Եւ ո՞րպէս կամիս առ մայր քո գնալ. իցէ՞ քեզ հնար դառնալ արդ 'ի տուն, օրիորդ տկար, խիզախել 'ի մարտ ընդդէմ մրրկին՝ յորմէ սքանչելեօք Սմոլոֆ և ես մազապուր զերծաք: Դուստրն ասէ. Թող ցուցից զփորձ զօրութեան իմոյ. առաւել է յիս ոյժ քան զոր կարծես. և ուրախ եմ, հայր, զի տեսցես քեզէն որչափ ինչ կարեմս առնել մօր իմում առ 'ի սիրտիւն: Եւ յասելն զայս՝ ցոլանայր յաչաց օրիորդին արիութիւն այնպիսի, որ տայր հօր նորա 'ի միտ առնուլ զհաստատութիւն դստերն 'ի խորհուրդս իւր: Եւ գնայր նա յեց 'ի Թեա հօրն և պատանւոյն, որք օգնէին նմա՝ պատըսպարեալ զգլուխ նորա լայն լօղկօքն: Քաղցր թուէին անդ պատանւոյն որոտընդոստ մրրկաց արհաւիրք, մատուցանելով նմա պատեհ օգնելոյ օրիորդին. յաչս դնէր զվտանգ կենաց՝ զոր ցանկայր բիւրիցս 'ի վերայ նորա փոխանակել. խիթայր և եթ զկենաց նորա, թէպէտ և վստահ էր 'ի փրկել զնա, և յեռանդն սրտին ձայնատուր լինէր ամպրոպաց առ հասարակ ընդդէմ իւր:

Կը շարունակուի:

Հ. ԵՂ. Վ. ՀԻՒՐՄԻԻԶ:

ՀԻՒՄՆԴ ԱՂԶԻՆ

Սրբազան իւզն դպաւ օրհասականին զարշապարաց. հնչեց մահագուշակ վըճիռն: Այս տառապեալ հոգւոյս համար՝ արուեստ բժշկութեան ալ դեղ չունի: Աշխարհք մարած է այս աղջկան համար: Ամենք կը հեռանան, ամենք կը փախչին. աւաղ, բարեկամութիւնն անդամ վերջի բարեններէն վախնալով՝ զլուխը վար կախած խոյս կուտայ: Այս սրտակտուր վայրկենին անյողդողդ վկայ՝ միայն մայրն է, որ կը կենայ իր սիրուն աղջրկան քովը:

Ծթընցուցած մահճին վարագուրաց մէջ կը մտնէ. կը հեռացընէ անկէ մահանչան կերոնները. և հաւատով խրախուսեալ աչքով մը՝ առանց դոյնը նետելու կը նայի փայտէ խաչին վրայ, զոր կոյսն քրիստոնեայ առած է ձեռացը մէջ. մէկդի կ'առնու օրհնեալ ջուրը, և սեականաչ տօսախէ սրսկիչը, օրհասականին անկողնին տխուր զարդերը:

Այլ երբ աւելի մօտէն կը տեսնէ այն սոսկալի սարսուռը զաւկին բոլոր կերպարանաց վրայ, այն պաղ ճակտէն կաթկըթած մահուան քրտինքը, այն մարմըրած աչուրները, « Ո՛հ, աղջիկս, կը կանչէ. եթէ ապրիս դու՝ ես ալ կ'ապրիմ, եթէ դու կը մեռնիս՝ ես ալ կը մեռնիմ: Արդէն գերեզմանն առեր կը ծածկէ. քու հայրդ ալ քոյրերդ ալ միայն մենք մնացեր ենք. դու ես իմ բոլոր ընտանիքս: Դո՛ւն ալ հիմայ զիս պիտի թողուս. դու իմ արիւնս, դու իմ աղջիկս: Չէ. դու պիտի ապրիս. Աստուած զքեզ պիտի առողջացընէ. մայրդ խիստ շատ կը սիրէ զքեզ. դու պիտի չմեռնիս: Չեմ գիտեր ինչ ձայն է որ կ'ըսէ ինձի, Յուսա՛: Եւ միթէ յուսալու համար առնեն անցած կըրնայ ըլլալ: Աստուած, մատղաշ հոգի աղջրկանս, կեցիր, մի թռչիր. և թէ աշխարհքէս փախչիլ կ'ուզես՝ գոնէ սպասէ մօրդ ալ »:

Այսպէս հաւատք կը քաջալերէ զնա, յոյսն ոյժ կուտայ: Այլ ինչ սրտագին խնամքով կը պահէ այս յոյսը: Մատ.

դաշ տառապելոյն ճակտին վրայ ծռած, մեծ մեծ և տաք տաք շունչերով կը տաքցընէ կ'ոգևորէ զայն. կը բռնէ անոր պաղած ձեռքերը. դողդոջուն մատներով կը զննէ անոր թափառական երակը: Մեղրի քաղցր հիւթը նարընջի անոյշ հոյզին խառնած՝ բորբոքեալ բերնին մէջ թափելով կը յուսայ այսպիսի բարեխառն խմելիքով մարել անոր ծոցը վառած ջերմին կրակը:

Եւ սակայն սեւափետուր օրհասն՝ կանչելով իր խաւարները, իր արցունքները, իր վախերը և սպառնալից արհաւիրքը՝ վերջի շունչերուն հասած օրիորդին զգայարանքը կը թմրեցընէր. և հրաժարման հրեշտակն այն լռած շըրթանց վրայ կը ցանէր մահուան տժգոյն մանիշակները: Այս ահաւոր տեսարանին՝ գլուխը խոնարհելով, խաչափայտն 'ի ձեռքն առնելով, « Դու միայն, ո՞վ ամենակարող Աստուած, կըրնաս զինքը ողջընցընել, կ'ըսէ մայրն. միայն 'ի քեզ կը յուսամ ես: Իմ խեղճ աղջկանս համար կ'աղաչեմ գթութիւնդ: Միթէ իր սակաւաւոր օրերն համրուած վճարուած են: Կը տեսնես, ո՞վ Տէր, թէ ինչ տաղնապի մէջ է իր կեանքն: Գիտեմ որ դու այս դառն բաժակին ինչուան մրուրն ալ խմեցիր. և մահդ քեզի արժանաւոր եղաւ. չեմ համարձակիր քու ցաւերդ իմ տառապանացըս համեմատել. այլ յիշէ քու Մօրդ ալ քաշած ցաւերը, և գթա ինծի...: Յայրոսի դուստրն քու ձայնովդ ողջընցաւ. Դու կանչեցիր իրեն, Աղջիկ, ելիր. և աղջիկն ելաւ. մինչդեռ յաւիտենական քունով կը քնանար. իսկ իմ աղջիկս դեռ կը շընչէ, և գուցէ ըսածներս ալ կը լսէ »:

Կանգ կ'առնու, վախնալով որ չափէն աւելի ալ ըսած ըլլայ. և կը փութայ նորէն անկողնին քով, տեսնելու թէ իրաւցընէ կը շընչէ աղջիկն: Եւ ճերմակ վարագոյրները բանալու տեսն տեսնելով Ս. Աստուածածնի պատկերը, կը կանչէ. « Դու որ մայր եղած ես, կը հասկընաս իմ ցաւերս. իմ բազմապտուղ հարսանեացս սա վերջին

մնացորդն է. քու անունդ դրեր էի ասոր՝ իր աշխարհք գալուն. իր տղայութիւնն քու ճերմակ գոյներուդ նուիրեցի. այն անունն, այն ճերմակ զգեստներն ինծի բարեգուշակ կը համարէի. և երբ աղջկանս հետ ձեռք ձեռքի տուած յեկեղեցի կ'երթայինք քու բարեխօսութեանդ ապաւինելու, իր հասակակիցներն հեռուէն տեսնելով իր ճերմակ հագուստը և բեհեզեայ քօղը, կ'ըսէին. Այդ աղջիկդ իր բարեբաղդութեամբն պիտի վայլէ՝ սիրոյ, անմեղութեան և խաղաղութեան օրեր: Ես ալ նայելով անոր պարկեշտ կերպարանաց վրայ՝ զիս երջանիկ կը համարէի քան զամենայն մայր »:

Այսպէս կ'ըսէր մայրն, և գիշերն առաջ կ'երթար: Ինն օր էր որ կը հսկէր նա հիւանդին քով. տաաներորդ արշալոյսն սկսաւ խայծիլ ամպոց վրայ. ծագեց առաւօտն աւելի վառվռուն գոյներով. և դեռ մայրն Տիրամօր պատկերին դիմացն էր. երկայն ատեն աղօթեց, հառաչեց անոր դիմաց: Եւ մինչդեռ կ'աղօթէր, տկար ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր « Մայրս... ո՞ր է մայրս: Ե՛կ. կարգէ դուրս քուն մը իջեր էր աչքերուս վրայ: Ո՞վ Աստուած, այն ինչ տխուր՝ միանգամայն և ակորժելի երազ էր տեսածս. — տառապանացս ատեն կարծեցի թէ այս անարգ երկրէս յափշտակուելով երկընքէն անդին անցայ. նոր տեսակ լոյս մը, նոր տեսակ կեանք մ'էր այն: Այն նոր, խաղաղ, անզրաղ, աստղուտ և ծաղկուտ աշխարհին մէջ՝ քու աղջիկդ պսակագըլուխ՝ ձեռքդ կը փնտռէր յառաջնորդ, և աչուրներդ՝ վկայ ըլլալու համար: Զուարթ և մաքուր դէմքեր քովս ժողոված էին. և սակայն հոգիս դեռ կէս 'ի կէս կը վայլէր այն երջանկութիւնը՝ որու վրայ զարմացեր էի: Մայր իմ... ո՞ր է մայրս, կանչեցի ես. և գունդը հրեշտակաց զիս քեզի բերին »: